**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ**

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ը

**2007 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 26-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱ-ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՄԻԱՎՈՐՎԱԾ ԱԶԳԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐ-ՊՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ՏՀՏ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳԼՈԲԱԼ ԱԼՅԱՆՍԻ ՀԵՏ ՀԱՄԱԳՈՐ-ԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒ-ԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երեւան 12 սեպտեմբերի 2008թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ.Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Հ. Դանիելյանի, Ֆ. Թոխյանի, Վ. Հովհաննիսյանի (զեկուցող), Հ. Նազարյանի, Վ. Պողոսյանի,

մասնակցությամբ՝ Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայա-ցուցիչ՝ Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարար Ն. Երիցյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100 հոդվածի 2-րդ կետի, 101 հոդվածի 1-ին կետի, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25, 38 եւ 72 հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2007 թվականի դեկտեմբերի 26-ին ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության կառավարության և Միավորված ազգերի կազմակերպության միջև ՏՀՏ և զարգացման գլոբալ ալյանսի հետ համագործակցության մասին համաձայնագրում ամրագրված պարտավորու-թյունների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխա-նության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթ է հանդիսացել Հանրապետության Նախագահի՝ սահմանադրական դատարան 05.08.2008թ. մուտքագրված դիմումը:

Ուսումնասիրելով սույն գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, Հանրապետության Նախագահի ներկայացուցչի գրավոր բացատրությունները, հետազոտելով համաձայնագիրը եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց .**

**1.** Հայաստանի Հանրապետության կառավարության և Միավորված ազգերի կազմակերպության միջև ՏՀՏ և զարգացման գլոբալ այյանսի հետ համագործակցության մասին համաձայնագիրը (այսուհետ՝ համաձայնագիր) ստորագրվել է 2007 թվականի դեկտեմբերի 26-ին:

Համաձայնագրի նպատակը Հայաստանի Հանրապետության և Միավորված ազգերի կազմակերպության միջև՝ ի դեմս Տնտեսական և սոցիալական հարցերով վարչության, «Տեղեկատվական և հեռահաղորդակցման տեխնոլոգիաների զարգացման համար» ծրագրի աշխատանքների հզորացմանն ուղղված գործընկերությունը խթանելը և ոլորտում առկա բացերը լրացնելն է: Այս համագործակցությունը կոչված է նպաստելու տեղեկատվական հասարակության զարգացմանը՝ մասնավորապես, ապահովելով ՏՀՏ ծառայությունների առավել լայն մատչելիություն, էլ. կառավարման համակարգի զարգացում, ՏՀՏ ոլորտում մասնավոր ներդրումների խթանում, զբաղվածության աճ և ՏՀՏ կիրառության խթանում տնտեսական և սոցիալական զարգացման հեռանկարներով:

**2.** Համաձայնագրով Հայաստանի Հանրապետությունը պարտավորվում է, մասնավորապես.

- աջակցել Միավորված ազգերի կազմակերպության Տնտեսական և սոցիալական հարցերով վարչության «ՏՀՏ և զարգացման գլոբալ այյանս» GLO/06/X02 ծրագրին՝ միանվագ Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից ներդնելով 50.000 ԱՄՆ դոլար, որը կուղղվի տարածաշրջանում և այլ երկրներում երիտասարդների միջև գործընկերության ցանցերի ընդլայնմանը, աշխարհի տարբեր երկրների երիտասարդների միջև ՏՀՏ միջոցների տարածմանը, ինչպես նաև կարողությունների ստեղծման միջոցով տարածաշրջանում ՏՀՏ ոլորտում ձեռներեցության խթանմանը,

- Միավորված ազգերի կազմակերպությանը վճարվող 50.000 ԱՄՆ դոլարը փոխանցել միանվագ:

Միավորված ազգերի կազմակերպության Տնտեսական և սոցիալական հարցերով վարչությունը Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից ներդրված գումարը կկառավարի և պատասխանատու կլինի Միավորված ազգերի

կազմակերպության ֆինանսական ընթացակարգերի ու կանոնների, ինչպես նաև գործող այլ նորմերի, կանոնակարգերի և ընթացակարգերի համաձայն:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100 հոդվածի 2-րդ կետով, 102 հոդվածի առաջին եւ չորրորդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63 եւ 64 հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց .**

1. 2007 թվականի դեկտեմբերի 26-ին ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության կառավարության եւ Միավորված ազգերի կազմակերպության միջեւ ՏՀՏ եւ զարգացման գլոբալ այյանսի հետ համագործակցության մասին համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102 հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

**ՆԱԽԱԳԱՀՈՂ** **Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

12 սեպտեմբերի 2008 թվականի
ՍԴՈ- 760